

- 4 Նա նըմանէր զայս առնելով
 Նաւաւարի լի հանճարով,
 Որ ի ծրփիւ ալեօք հողմնով
 Խընդրէ ծոց նեղ լըքեալ լայն ծով:
- 5 Իսկ կեսարեանց խումբ համօրէն
 Եւ մանաւանդ որ կայրն անդրէն
 Մաղթէր ըզնա խոնարհօրէն
 Ոչ հեռանալ յիւր բուն հօտէն:
- 6 Բայց որոշեալ էր նա յայնմիկ
 Առ պատճառաց ոչ սակաւիկ,
 Ուստի չանսայր նըմա յայնմիկ
 Հըրաժարեալ նըստէր լռիկ:
- 7 Յետ այնորիկ իբր յայն ամի
 Յակոբ Նալեանն եւս հօրաժարի,
 Լինիւ հովիւ մեծի հօտի
 Գաղատիոյ ճոխ գաւառի:
- 8 Որ թէպէտ էր այնր առաջնորդ
 Այլ նըստել անդ չեղել ցանկորդ,
 Ուր դընելով զիւր փոխանորդ
 Լինէր ռաբբւոյն կենաց կցորդ:
- 9 Յայնժամ Յօհան պատրիարգի
 Տեսեալ զՍարգիս առանց գահի
 Ամէր զի նա հովիւ լիցի
 Գաղատացւոց անդէտ հօտի:
- 10 Բայց յըսկզբան նա հրաժարի
 Հովիւ գոլոյ նոյն փարախի,
 Յոր անդադար աղմուկ չփոթի
 Լինէր յանհատս խաշանց ջոկի: